Յարկային տեղեկատվական համակարգ
www.taxinfo.am

«Հավելված N2
«Հողի հարկի հաշվարկման և
վճարման կարգի մասին» հրահանգի

# ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ

Փաստաթղթի հերթական համարը
N ___________________
(լրացվում է հաշվառող մարմնի կողմից)

| | | |
|---|---|---|
| ՀՎՀՀ | [1] | |
| Կազմակերպության անվանումը | [2] | |
| Կազմակերպության գտնվելու վայրը | [3] | |
| Հեռախոսահամարը | [4] | |
| Հաշվառող մարմնի անվանումը | [5] | |
| Հաշվարկի ներկայացման ամսաթիվը | [6] | |
| Հաշվետու (ճշտման) ժամանակաշրջանը | [7] | |
| *Չափի միավոր* | | *դրամ* |

**[1]** տողում լրացվում է հարկային մարմնի կողմից կազմակերպությանը տրամադրած հարկ վճարողի հաշվառման համարը,
**[2]** տողում լրացվում է կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական տեսակը,
**[3]** տողում լրացվում է կազմակերպության գտնվելու վայրի հասցեն,
**[4]** տողում լրացվում է աշխատանքային հեռախոսահամարը,
**[5]** տողում լրացվում է հողի հարկ վճարող կազմակերպություններին հաշվառող մարմին հանդիսացող տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը:
**[6]** տողում լրացվում է հաշվառող մարմին հողի հարկի հաշվարկի ներկայացման ամսաթիվը:
**[7]** տողում լրացվում է այն հաշվետու կիսամյակը (ճշտված հաշվարկի ներկայացման դեպքում՝ այն կիսամյակը), որի համար ներկայացվում է հաշվարկը (ճշտված հաշվարկի ներկայացման դեպքում տողի աջ վանդակում կատարվում է «X» նշագրումը),

| Հողամասի կադաստրային ծածկագիրը (համարը) | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի գտնվելու վայրի վերաբերյալ լրացուցիչ տվյալներ | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը) | Հողամասի չափը (հա) | Կադաստրային զուտ եկամուտը (դրամ/հա) | Կադաստրային արժեքը (դրամ/հա) | Հողի հարկի կիսամյակային դրույքաչափը (%) | Հաշվետու կիսամյակում հողամասի հողի հարկով հարկվող օբյեկտ համարվելու ամիսների թիվը | Հողի հարկի կիսամյակային հաշվարկված գումարը | Հողի հարկի գծով արտոնությունները | Հողի հարկի կիսամյակային վճարման ենթակա գումարը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [8] | [9] | [10] | [11] | [12] | [13] | [14] | [15] | [16] | [17] | [18] | [19] | [20] |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | [21] | | | | |

**[8]** սյունակում լրացվում է գույքային միավոր հանդիսացող և հարկվող օբյեկտ համարվող յուրաքանչյուր հողամասի չորս խումբ թվերի համակցությամբ կադաստրային ծածկագիրը (համարը)՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի վկայականում նշված հողամասի տվյալներին կամ օրենքով սահմանված կարգով անշարժ գույքի կադաստր վարող ու հաշվառող մարմիններից ստացված տվյալներին համապատասխան,
**[9]** սյունակում լրացվում են յուրաքանչյուր հողամասի գտնվելու վայրի հասցեի տեքստային տվյալները: Գյուղատնտեսական նշանակության և անտառային ֆոնդի հողերի համար այս սյունակը չի լրացվում,
**[10]** սյունակում օրենքով սահմանված դրույքաչափերի կիրառման համար լրացվում են համապատասխան հողամասերի գտնվելու վայրի վերաբերյալ լրացուցիչ տվյալները՝ բնակավայրի սահմաններից ներս գտնվող հողերի համար լրացվում է՝ 1, բնակավայրի սահմաններից դուրս գտնվող հողերի համար՝ 2,
**[11]** սյունակում լրացվում է ՀՀ հողային օրենսգրքով սահմանված հողային ֆոնդին և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի վկայականում նշված հողամասի տվյալներին համապատասխան՝ յուրաքանչյուր հողամասի նպատակային նշանակությունը: Գյուղատնտեսական նշանակության հողամասերի դեպքում լրացվում է՝ 1, բնակավայրերի նշանակության դեպքում՝ 2, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության դեպքում՝ 3, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների դեպքում՝ 4, հատուկ պահպանվող տարածքների դեպքում՝ 5, հատուկ նշանակության հողերի դեպքում՝ 6, անտառային հողերի դեպքում՝ 7, ջրային հողերի դեպքում՝ 8, պահուստային հողերի դեպքում՝ 9,
**[12]** սյունակում լրացվում է ՀՀ հողային օրենսգրքին և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի վկայականում նշված հողամասի տվյալներին համապատասխան՝ յուրաքանչյուր հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը (օգտագործման նպատակը): Գյուղատնտեսական նշանակության հողերի համար ջրովի վարելահողերի դեպքում լրացվում է 1/1, անջրդի վարելահողերի դեպքում՝ 1/2, բազմամյա տնկարկների համար խաղողի դեպքում՝ 1/3, կորիզավորի դեպքում՝ 1/4, հնդավորի դեպքում՝ 1/5, խոտհարքների համար՝ 1/6, արոտավայրերի համար՝ 1/7, այլ գյուղատնտեսական հողատեսքերի համար՝ 1/8: Բնակավայրերի հողերի համար բնակելի կառուցապատման հողերի դեպքում լրացվում է 2/1, հասարակական կառուցապատման հողերի դեպքում՝ 2/2, խառը կառուցապատման հողերի դեպքում՝ 2/3, ընդհանուր օգտագործման հողերի դեպքում՝ 2/4, այլ հողերի դեպքում՝ 2/5: Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի համար արդյունաբերական օբյեկտների դեպքում լրացվում է 3/1, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների դեպքում՝ 3/2, պահեստարանների դեպքում՝ 3/3, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի դեպքում՝ 3/4: Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի համար էներգետիկայի հողերի դեպքում լրացվում է 4/1, կապի հողերի դեպքում՝ 4/2, տրանսպորտի հողերի դեպքում՝ 4/3, կոմունալ ենթակառուցվածքների հողերի դեպքում՝ 4/4: Հատուկ պահպանվող տարածքների հողերի համար բնապահպանական հողերի դեպքում լրացվում է 5/1, առողջարարական նպատակներով նախատեսված հողերի դեպքում՝ 5/2, հանգստի համար նախատեսված հողերի դեպքում՝ 5/3, պատմական և մշակութային հողերի դեպքում՝ 5/4,
**[13]** սյունակում լրացվում է յուրաքանչյուր հողամասի չափը՝ հեկտարներով (հա),
**[14]** կամ **[15]** սյունակներում յուրաքանչյուր հողամասի համար լրացվում է «Հողի հարկի մասին» օրենքով սահմանված հողամասերի հարկման օբյեկտը՝ հողի հարկի հաշվարկման նպատակով կադաստրային գնահատման արդյունքում որոշված կադաստրային զուտ եկամուտը կամ կադաստրային արժեքը մեկ հեկտարի համար, օրենքով սահմանված կարգով անշարժ գույքի կադաստր վարող կամ հաշվառող մարմիններից ստացված տվյալներին համապատասխան (յուրաքանչյուր հողամասի համար լրացվում է [14] և [15] սյունակներից որևէ մեկը),
**[16]** սյունակում լրացվում է տվյալ հողամասի հողի հարկի հաշվարկման համար «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան կիսամյակային դրույքաչափը,
**[17]** սյունակում լրացվում է հողամասի՝ հաշվետու կիսամյակի ընթացքում հողի հարկով հարկվող օբյեկտ համարվելու (հողի հարկի պարտավորության) ամիսների թիվը: Եթե հաշվարկում ներկայացվում է հաշվետու կիսամյակի ընթացքում նպատակային կամ գործառնական նշանակության (հողատեսքերի) փոփոխություններ կրած հողամաս, ապա նույն հողամասի համար ըստ հարկման օբյեկտների լրացվում են երկու տողեր՝ հողի հարկի հաշվարկման համար հիմք հանդիսացող և հաշվարկի ծևով պահանջվող համապատասխան տվյալներով,
**[18]** սյունակում լրացվում է յուրաքանչյուր հողամասի հողի հարկի կիսամյակային հաշվարկված գումարը ([13] սյունակ x [14] կամ [15] սյունակներից որևէ մեկը x [16] սյունակ]):6x[17] սյունակ): Ընդհանուր բաժնային սեփականության դեպքում [22] սյունակում լրացվում է հողի հարկի տարեկան հաշվարկված գումարի՝ կազմակերպության բաժնեմասին համապատասխանող մասը,
**[19]** սյունակում լրացվում են օրենքով սահմանված դեպքերում հողի հարկի արտոնության գումարները,
**[20]** սյունակում յուրաքանչյուր հողամասի համար լրացվում են հողի հարկի կիսամյակային վճարման ենթակա գումարները ([18] սյունակ - [19] սյունակ),
**[21]** սյունակում լրացվում են [18], [19] և [20] սյունակների բոլոր տողերի հանրագումարները,

| **Տեղեկություններ ընդհանուր համասեփականատերերի վերաբերյալ** | | | | | **[22]** |
|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասի | | համասեփականատեր կազմակերպության (ֆիզիկական անձի) անվանումը (անունը, ազգանունը) | համասեփականատեր կազմակերպության (ֆիզիկական անձի) գտնվելու վայրը (բնակության վայրը) | Համասեփականատեր ֆիզիկական անձանց սոցիալական ապահովության քարտերի համարները (առկայության դեպքում) | Ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ բաժնեմասի չափը |
| կադաստրային ծածկագիրը | գտնվելու վայրը | | | | |
| | | | | | |
| | | | | | |

[22] բաժինը լրացվում է, եթե կազմակերպությունը հանդիսանում է համասեփականատեր:

| Նշում ……..……………………………… հաշվետու ժամանակաշրջանում ֆիզիկական անձանց (անհատ ձեռնարկատերերին) պատկանող հարկվող օբյեկտ համարվող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման մասին [23] | |
|---|---|

[23] բաժինը լրացվում է, եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում սեփականության իրավունք է ձեռքբերվել ֆիզիկական անձ (անհատ ձեռնարկատերերին) պատկանող հողամասի նկատմամբ: Այդ դեպքում տողի աջ վանդակում կատարվում է «X» նշագրումը:

Կ.Տ.

*Տնօրեն* ___________ (ստորագրություն) ___________ (անուն, ազգանուն)

*Գլխավոր հաշվապահ* ___________ (ստորագրություն) ___________ (անուն, ազգանուն)

1. Հաշվարկը լրացվում է երկու օրինակից, որոնք ներկայացվում են համապատասխան հաշվառող մարմին: Հաշվառող մարմնի կողմից գրանցվելուց հետո հաշվարկի մեկ օրինակը հանձնվում է հարկ վճարողին»: